ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2021թ. հունվարի 08-ին ստորագրված թիվ ՄԱԾՁԲ-21/8-Պ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

Ք. Երևան 22-ը դեկտեմբերի 2021թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Մուշեղ Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից

(յուրաքանչյուրը առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր)

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի և 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչպես նաև Կողմերի միջև 2021թ. հունվարի 08-ին ստորագրված թիվ ՄԱԾՁԲ-21/8-Պ պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.6. կետի պահանջները, ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը համաձայնեցին.

1. Պայմանագրի 1.5. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1.1. «1.5. Սույն Պայմանագրով սահմանված պայմանները կիրառելի են Կողմերի միջև 2021թ. հունվարի 01-ից առաջացած հարաբերությունների նկատմամբ և գործում են մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը:»:

2. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
3. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հովհաննես Մովսիսյան
Գործադիր տնօրեն

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ

Մուշեղ Միլիտոնյան
Գլխավոր տնօրեն